

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
խորհրդի նիստի

ք. Երևան

4 օգոստոսի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1. Անդրանիկ Ալեքսանյան | 7. Իգոր Մկրտումյան     |
| 2. Աննա Կարախանյան     | 8. Լիաննա Գալստյան     |
| 3. Արամ Վերոյան        | 9. Միսակ Խաչատրյան     |
| 4. Արման Խաչատրյան     | 10. Սիրանուշ Վարդանյան |
| 5. Արման Ներսիսյան     | 11. Քրիստինա Հակոբյան  |
| 6. Գրիգորի Սաղյան      |                        |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության անդամներ՝ Գագիկ Սարգսյանը, Նարինե Դերձակյանը, Քրիստինա Բաբաջանյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Աննա Կարախանյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում, հաստատվեց հետևյալ օրակարգը.

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպությանը գումար փոխանցելու մասին:
2. Տարեկան անդամավճարի չափը, անդամավճարը վճարելու ժամկետները և դրա գանձումը կազմակերպելու կարգը սահմանելու մասին:

1. «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպությանը գումար փոխանցելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Արման Ներսիսյանը՝ տեղեկացնելով, որ «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպությունը („Internet Society, non-profit organization) սխալմամբ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի հաշվին է փոխանցել 14464 ԱՄՆ դոլար (մեկ դեպքում՝ 7488 ԱՄՆ դոլար, երկու դեպքում՝ 3488-ական ԱՄՆ դոլար), մինչդեռ այդ գումարը, որպես դրամաշնորհ, պետք է փոխանցվեր «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ-ին: Ելույթ ունեցողը նշեց, որ գումարը կամ պետք է վերադարձվի «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպությանը՝ ճիշտ հասցեատիրոջը փոխանցելու համար, ինչը տևական գործընթաց է կամ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ն կարող է ինքը փոխանցել այդ գումարը «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ-ին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ նաև պարոն Իգոր Մկրտումյանը՝ նշելով նաև, որ «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ-ն կղիմի «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպությանը՝ այս տեսակի սխալները բացառելու խնդրանքով:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝

Որոշում՝ «Ինտերնետ Սրսայթի» ոչ առևտրային կազմակերպության («Internet Society» non-profit organization) կողմից «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանը սխալմամբ փոխանցված գումարը՝ 14464 ԱՄՆ դոլար փոխանցել «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպությանը:

2. Տարեկան անդամավճարի չափը, անդամավճարը վճարելու ժամկետները և դրա գանձումը կազմակերպելու կարգը սահմանելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը: Նիստի նախագահողը նշեց, որ կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության համաձայն, կազմակերպության անդամ կարող են դառնալ նաև իրավաբանական անձինք: Ուստի, անհրաժեշտություն է առաջացել սահմանել իրավաբանական անձանց կողմից վճարման ենթակա տարեկան անդամավճարի չափը: Մինևույն ժամանակ պարոն Մկրտումյանը հիշեցրեց, որ 2019 թվականին քննարկվել է ֆիզիկական անձանց կողմից վճարման ենթակա տարեկան անդամավճարի չափի փոփոխության վերաբերյալ հարցը և թեև այն ժամանակ այն չի փոփոխվել, սակայն առաջարկություն է հնչել անդրադառնալ այդ հարցին նոր խմբագրությամբ կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո: Ընդգծվեց նաև, որ ֆիզիկական անձանց համար տարեկան անդամավճարի չափը փոփոխելու դեպքում, նոր չափը նրանց համար ուժի մեջ կմտնի 2021 թվականի հունվարի 1-ից:

Նիստի նախագահողի ելույթից հետո ծավալվեց քննարկում: Քննարկման ընթացքում հնչեցին հետևյալ առաջարկությունները՝ ֆիզիկական անձանց համար տարեկան անդամավճարի չափը թողնել նույնը, սահմանել 5000 ՀՀ դրամ, 6000 ՀՀ դրամ, իրավաբանական անձանց համար սահմանել՝ 10 հազար, 25 հազար, 30 հազար, 50 հազար ՀՀ դրամ: Դիտարկվեց նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար մինևույն գումարը սահմանելու տարբերակը, քննարկվեցին կազմակերպության անդամ դառնալու, անդամների քանակի հետ կապված հարցեր:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը՝

- ձայների 8 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 2 անդամ չեն մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ որոշեց իրավաբանական անձանց համար տարեկան անդամավճարի չափը սահմանել 30 հազար ՀՀ դրամ,
- ձայների 6 կողմ, 4 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշեց ֆիզիկական անձանց համար տարեկան անդամավճարի չափը սահմանել 5000 ՀՀ դրամ՝ սահմանելով նաև, որ ֆիզիկական անձանց համար տարեկան անդամավճարի նոր չափը ուժի մեջ է մտնելու 2021 թվականի հունվարի 1-ից:

Տարեկան անդամավճարի չափը սահմանելուց հետո ներկայացվեց տեղեկատվություն անդամավճարի վճարման գործող ժամկետի և եղանակների մասին: Այնուհետ ծավալվեց քննարկում, որի ընթացքում հնչեցին տարբեր առաջարկություններ անդամավճարի վճարման ժամկետների վերաբերյալ:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ սահմանեց, որ կազմակերպության անդամը տվյալ օրացույցային տարվա համար տարեկան անդամավճարը վճարում է՝

- կազմակերպությանը անդամագրվելիս՝ անդամագրվելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում,

- կազմակերպության անդամագրմանը հաջորդող տարիներին՝ մինչև տվյալ տարվա մարտի 1-ը:

Որոշում՝

1. Իրավաբանական անձ հանդիսացող «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամի կողմից վճարման ենթակա տարեկան անդամավճարի չափը սահմանել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

2. 2021 թվականի հունվարի 1-ից ֆիզիկական անձ հանդիսացող «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամի կողմից վճարման ենթակա տարեկան անդամավճարի չափը սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

3. Սահմանել, որ «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամը տվյալ օրացույցային տարվա համար տարեկան անդամավճարը վճարում է՝

1) կազմակերպությանը անդամագրվելիս՝ անդամագրվելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում,

2) կազմակերպության անդամագրմանը հաջորդող տարիներին՝ մինչև տվյալ տարվա մարտի 1-ը:

Նիստի նախագահող՝

Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝

Աննա Կարախանյան